

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը  
Օշականի ճակատամարտի 190 ամյակին նվիրված միջոցառման ժամանակ

Ողջունում եմ բոլոր ներկաներին:

Այսօր, օգոստոսի 17-ին, նշում ենք 1826-28թթ. ռուս-պարսկական II պատերազմում Օշականի ճակատամարտի հաղթանակի օրը:

Երկու սրբավայրերի՝ Սբ. Էջմիածնի և Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցիների մոտ տեղի ունեցած ճակատամարտը հաղթական ավարտ ունեցավ, որը ևս մեկ անգամ ապացուցեց այն փաստը, որ միասնական հայ-ռուսական ուժերը՝ հոգևորականների, կամավորների հետ միասին, պիտի կարողանային պահպանել իրենց հողը օտարի ոտնձգությունից:

Արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին, մի ձեռքում՝ խաչ, մի ձեռքում՝ զենք, ղեկավարեց կամավորականների մասնակցությունը ճակատամարտին:

Ոգևորիչ իր խոսքում նա կոչ էր անում, որ մի անգամ էլ միասնական մասնակցեն պայքարին ու հետո ապրեն ազատ:

Այս կարևոր իրադարձությանը հաջորդեց 1828թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագիրը՝ որով Արևելյան Հայաստանը ազատագրվեց 1500-ամյա պարսկական լծից:

Մաղթում եմ խաղաղ երկինք ամենուր, ու հայ ռուսական համագործակցությունը թող որ լինի գիտության և կրթության բնագավառում: